ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ANQA-2024/111

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 մայիսի 2024 թ. N 111

«ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամ

Գործունեության հասցեն՝ ՀՀ, *ք.* Երևան, Տիգրան Մեծի 17

Նախորդ հավատարմագրման մասին ինստիտուցիոնալ հավատարմագրում որոշումը և ժամկետը՝ 4 տարի ժամկետով՝ 01.04.2020թ.-01.04.2024 թ.

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2024 թվականի մայիսի 10-ին Հավատարմագրման Հանձնաժողովի նիստում քննարկեց «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ՀՊՄՀ, Համալսարան, բուհ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում՝ 28 ապրիլի 2023 թ.

վերանայված ինքնավերլուծության ներկայացում՝ 7 նոյեմբերի 2023 թ.

փորձագիտական այցի իրականացում՝ 11-14 դեկտեմբերի 2023 թ.

փորձագիտական զեկույցի ներկայացում՝ 27 մարտի 2024 թ.

թերությունների վերացման նախնական

«Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի» հիմնադրամի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով. **«Որակի ներքին ապահովման համակարգ»** չափանիշը գնահատվել է անբավարար:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջի համաձայնությունը, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների նախնական ծրագիրը, լսելով քոլեջի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

1. ***Հիմնադրամն ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում***

Նախորդ հավատարմագրումից հետո ՀՊՄՀ-ն վերանայել է մասնագիտական կրթական ծրագրերը ՈԱԾ-ի և որակավորումների ոլորտային շրջանակի պահանջների համաձայն, ինչպես նաև՝ մասնագիտական կրթական ծրագրերին վերաբերող քաղաքականությունը, կարգերն ու ընթացակարգերը: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, մանրամասն նկարագրված են՝ըստ շնորհվող որակավորումների արդյունքների:

Նախորդ հավատարմագրումից հետո մշակվել և հաստատվել են ուսումնական գործընթացի, գիտելիքների գնահատման, պրակտիկաների կազմակերպման, թեզերի պատրաստման և գնահատման կարգերը:

Ներկայումս բակալավրի և մագիստրոսական բոլոր ՄԿԾ-ներն ունեն սահմանված ձևաչափի մասնագրեր: ՀՊՄՀ-ում կարևորում են աշխատաշուկայի առաջադրած նոր պայմանները, ներդրվել են կրկնակի մասնագիտացումներով բակալավրի կրթական ծրագրեր: Նախատեսվում է 2024 թվականից՝ մանկավարժական ուղղվածության մեջ ավելացնել հոգեբանական բաղադրիչը:

ՄԿԾ-ներում տեսանելի են նաև միջառարկակայան կապեր, բայց թույլ է համագործակցությունը տարբեր ամբիոնների միջև: ՀՊՄՀ-ում ներդվել է շարունակական պրակտիկաների սկզբունքը:

Լսարանները հագեցած են անհրաժեշտ տեխնիկական միջոցներով: Համալսարանն ունի գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյունքների, և ապահովում է ակադեմիական ազնվությունը:

Իրականացվում են հարցումներ գնահատման նոր համակարգի արդյունավետությունը գնահատելու և խնդիրները վերհանելու նպատակով:

ՄԿԾ-ները բովանդակային առումով համահունչ են նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին և նպաստում են ուսանողների ու դասախոսների շարժունությանը, միջազգայնացմանը:

ՌԾ-ով կարևորում է ՊԴ կազմի ընտրության կանոնակարգերի վերանայումը և բարելավումը:

Գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր: Յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են

պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ:

Դասախոսական կազմի գնահատման մեխանիզմներից են ուսանողների շրջանում կատարվող հարցումները, դասալսումները, իրականացնում է դասավանդողների վերապատրաստումներ:

Վերջին տարիներին բարելավվել են բուհի ուսումնագիտական ռեսուրսները: Միջազգային ծրագրերի ներգրավվածության արդյունքում բուհում պարբերաբար համալրվում են ՄԿԾ-ների համար անհրաժեշտ լաբորատորիաներն ու ռեսուրսները: Բավական ընդլայնվել է թվային տեխնոլոգիաներով դասավանդումը: Խնդիրներից է ֆինանսական մուտքերի դիվերսիֆիկացիան:

Առկա են կրթական միջավայրի ապահովության, առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայություններ, ռեսուրսների արդիականացմանն ուղղված գործընթացներ:

2. *Կառավարման և որակի ապահովման համակարգերն հիմնականում ապահավում են կայունություն և զարգացում*

ՀՊՄՀ-ն նախորդ հավատարմագրումից հետո բարելավել է ռազմավարական կառավարման գործընթացները, հստակեցրել իր առաքելությունն ու տեսլականը, որոնք արտացոլում են հաստատության կարևորությունը և դերը ՀՀ մանկավարժների պատրաստման ուղղությամբ:

Առավել շեշտադրվել է մանկավարժահոգեբանական տեսանկյունը. համընդհանուր ներառականության սկզբունքների և մանկավարժական կրթության նոր ռազմավարությունների մշակմամբ: Բուհի կողմից կարևորվում է 21-րդ դարի հմտությունների լայն տիրապետմամբ ուսուցչի պարտարստումը. պատրաստել հետազոտող, քննադատական մտածելակերպ ունեցող մանկավարժներ, ովքեր ունակ կլինեն կիրառելու թվային տեխնոլոգիաները և պատրաստ կլինեն աշխատելու նոր սերնդի հետ:

Կարևորում է նաև ուսանողներին փոխանցել «սովորեցնել սովորել» կարողությունը:

Բուհի ներքին շահակիցների կարիքներն արտացոլված են համալսարանի ռազմավարական ուղղություններում: Իրականացվում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում:: Առկա են ՌԾ գնահատման որոշակի մեխանիզմներ:

Նախորդ հավատարմագրումից հետո ՀՊՄՀ-ին հաջողվել է իրականացնել հակաճգնաժամային քաղաքականություն, որոշակիորեն բարելավվել են կազմակերպական կառուցվածքը, ընդլայնվել է ներքին և արտաքին շահակիցների մասնակցությունը որոշումների կայացման գործընթացներում:

Կառավարման համակարգն ապահովում է էթիկայի կանոններին համապատասխան, որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց, որի իրականացման համար ունի անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

2020-2025թթ ՌԾ-ով վերանայվել է որակի ապահովման քաղաքականությունը, սահմանվել են ՈԱ զարգացման ուղղությունները: ՈԱ համակարգը ապահովված է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներով: Բուհում բարելավվել է ՈԱ համակարգը կարգավորող փաստաթղթային հենքը, սակայն դրանք հստակ պատկերացում չեն տալիս որակի ապահովման համակարգի զարգացման մասին: Հետադարձ կապի մեխանիզմներն հատվածական են գործում: Տվյալների հավաքագրումը չի ներառում բուհում իրականացվող բոլոր գործընթացները և ՊԻԳԲ շրջափուլը լիովին չի օգտագործվում բոլոր գործընթացների որակի շարունակական բարելավման համար: Արտաքին շահակիցները դեռևս ակտիվ չեն որակի ապահովման գործընթացներում: ՈԱ բաժնի ստորադասված դիրքը կազմակերպական կառուցվածքում խոչընդոտում է բաժնի ինքնավարությանը: Որակի մշակույթը դեռևս ձևավորման փուլում է:

3. Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը զարգացման միտումներ ունեն և աջակցում են որակավորումների արժանահավատ շնորհմանը

ՀՊՄՀ-ում գործում է առանձնացված կառուցվածքային ստորաբաժանում՝ դիմորդների ներգրավման կենտրոն, որը զբաղվում է ուսանողների հավաքագրման գործընթացով, գործում են ընտրության ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ:

ՄՈՒՀ-ն ունի ուսանողների կրթական կարիքների վերհանման քաղաքականություն և ընթացակարգեր: Ստեղծված են լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ:

Համալսարանում իրականացվում են նաև ուսումնական պլաններով չնախատեսված լրացուցիչ դասընթացներ՝ պայմանավորված այդ պահին դուրսբերված խնդիրներով, առաջարկներով: Գործում է համալսարան-գործատու համագործակցության կենտրոնը, որի հիմնական գործառույթը շրջանավարտների և գործատուների տվյալների հավաքագրումն ու բազաների թարմացումն է, սակայն դեռ չի իրականացվել համապարփակ վերլուծություն շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ: Գործում է նաև պրակտիկայի կենտրոնը: ՀՊՄՀ-ն աջակցում է ուսանողներին՝ ներգրավվելու գիտահետազոտական աշխատանքներում, որի համար գործում է Ուսանողական գիտական ընկերությունը (ՈՒԳԸ): ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին՝ ՈՒԽ, ուսանողների և շրջանավարտների շրջանում անցկացվում են հարցումներ:

Ըստ ՌԾ-ի՝ հետազոտությունը բուհի գերակա ուղղություններից մեկն է: ՀՊՄՀ-ն կարևորել ու հաշվի է առել նախորդ հավատարմագրման խորհրդատվությունները և հստակեցրել է գիտահետազոտական ոլորտում իր առաջնահերթություններն ու նպատակները: ՌԾ-ում սահմանվել են առաքելությունից բխող գիտական ուղղությունները՝ մանկավարժություն, հոգեբանություն, դասավանդման մեթոդիկաներ, հայագիտություն: Ամբիոններում նույնպես սահմանված են գիտահետազոտական ուղղությունները: Կուրսային, ավարտական, մագիստրոսական թեմաները, ինչպես նաև կազմակերպվող գիտաժողովների ու գիտական սեմինարների թեմաները բխում են այդ ուղղություններից: Ընդլայնվել է հանրակրթական դպրոցին առնչվող խնդիրներին վերաբերող հետազոտությունների շրջանակը:

ՀՊՄՀ-ն ունի գիտահետազոտական միջնաժամկետ դրամաշնորհային ծրագրեր, որոնք իրականացնում է համապատասխան կենտրոնների միջոցով:

Համալսարանի ֆինանսավորմամբ հրատարակվում է 8 պարբերական: Որպես խրախուսման մեխանիզմ է գիտական աշխատանքների անվճար տպագրությունը: Հետազոտական գործունեության խթանման արդյունքում ավելացել են դասախոս-ուսանող համատեղ հոդվածները: Տեսանելի են բուհի ջանքերն ուսումնական գործընթացի և գիտահետազոտության միջև կապը սերտացելու ուղղությամբ, ինչպես նաև հետազոտական գործընթացների միջազգայնացման համար: Կարևոր ձեռքբերում է WINSDOM պարբերականի Scopus և Web of Science գիտաչափական շտեմարաններում գրանցումը:

ՀՊՄՀ-ում գործում է ներքին ու արտաքին շահակիցների առջև բազմամակարդակ հաշվետվողականության համակարգ՝ ապահովելով հաշվետվողականության ներքևից վերև մոտեցումը: Հաշվետվություններն ունեն սահմանված ձևաչափ, քննարկվում են ստորաբաժանումներում և հրապարակային են: Համալսարանը հասարակության տարբեր շերտերին մանկավարժահոգեբանական գիտելիքներ փոխանցելու մեծ փորձ ունի: ՀՊՄՀ-ն վերջին հավատագրումից հետո ծավալել է արտաքին կապերի ընդլայնմանը և միջազգայնացմանն ուղղված գործընթացներ, որոնք հանդիսանում են ռազմավարական պլանավորման բաղակցուցիչ մաս: Տեսանելի է ինչպես տեղական, այնպես էլ միջազգային կազմակերպությունների հետ գործընկերային կապերի ընդլայնումը, որոնք նպաստել են գիտության, հետազոտության և կրթության

միջազգայնացման, առաջավոր փորձի ուսումնասիրության և տեղայնացման գործընթացների ակտիվացմանը:

5. Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ՀՊՄՀ-ի կողմից ներկայացված ծրագիրն իրատեսական է և ռիսկեր չի պարունակում: Իրականացման դեպքում կբերեն որակական փոփոխությունների:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամին շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում 6 /վեց/ տարի ժամկետով:**
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով **«Որակի ներքին ապահովման համակարգ»** ոլորտում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը:
3. **Հատուկ ուշադրություն դարձնել.**
   - գործընկերային գնահատմանը՝ հաշվի առնելով վեր հանված խնդիրները,
   - նոր մշակվող Ռազմավարական ծրագրում բուհի ռազմավարական առաջնահերթությունների հստակեցմանը՝ գնահատելով բուհի մարդկային և ֆինանսական ռեսուրսները,
   - 21-րդ դարի ուսուցչի բնութագրի սահմանմանը՝ ներառելով այն առաքելության մեջ,
   - ռազմավարական ծրագրում առաջընթացի գնահատման ցուցիչների վերանայմանը՝ դարձնելով ավելի իրատեսական և չափելի,
   - ՄՈՒՀ-ի կազմակերպական կառուցվածքի վերանայմանը՝ապահովելով հստակեցնելով ՈԱ ստորաբաժանման ինքնավարությունը,
   - գնահատման կարգի վերանայման անհրաժեշտությանը՝ համապատասխանեցնելով համալսարանում տեղ գտած նոր իրողությունների հետ,
   - աշխատաշուկայում շրջանավարտների զբաղվածությունը և դրանց խոչընդոտող խնդիրների վերլուծելու անհրաժեշտությանը և արդյունքները կիրառել ՄԿԾ-ների բարելավման գործընթացում,
   - ՊԴ և վարչական կազմի վերապատրաստումների երկարաժամկետ պլանի ներդրմանը,
   - շրջանավարտների հետ հետադարձ կապի ապահովման ինստիտուցիոնալ մեխանիզմների ներդմանը,
   - ներքին շահակիցների լեզվամիմացության մակարդակի շարունակաբար բարձրացմանը:
4. ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 2 տարի մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով համալսարանի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:
5. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել ՀՊՄՀ-ի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի նախագահ **Ա. Սաղյան**

2024 թ., մայիսի 10